ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248 օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 152-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «հանրային ծառայության մեջ գտնվող» բառերը,

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման մասին որոշումն ուղարկվում է կասկածյալի կամ մեղադրյալի աշխատավայր, որը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, այն ի կատար ածելու իրավասություն ունեցող անձը, իսկ այդպիսին չլինելու դեպքում անձամբ կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր է կատարել այն և դրա մասին տեղյակ պահել համապատասխան որոշումը կայացրած մարմնին կամ անձին։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը։